Օրհնեալ լինի յաւիտեան Ներսէս բէկը Սարումեանց՝ Բագուի պատուաւոր նոտարը, այնքան սիրում է Քիլվարցւոց, այնքան աշխատում է նոցա եկեղեցւոյ պայծառութեան և նոցա դպրոցի բարեկարգութեան համար, որ կարծես իրեն հոգեորդիքը լինին Քիլվարցիք կամ իրեն հարազատ եղբարքը. և այս է քրիստոնէական անկեղծ և ճշմարիտ եղբայրութիւնն. Ստուած տայ, որ Բագուի մեծամեծք օրինակ առնելով Ներսէս բէկից՝ իւրաքանչիւրը մի մի գիւղ ընտրէին Զամախւոյ թեմի, և այնպէս օգնէին խեղջ գիւղացւոց, ինչպէս օգնում են պ. Բուդաղեան եղբարք Սաղիանցւոց, պ. Գրիգոր Այվազեան Սարուշէն գիւղացւոց և պ. Հայրապետ Քօշարեանց Գանձակ և Թօփիշէն գիւղացւոց։

Բայց լիայոյս եմ, թէ անշուշտ Բագուի և ուրիշ քաղաքների կարող անձինք մի օր ուշ կը դարձնեն իրրեւ մեծ և գիտուն եղբայրներ իրենց փոքր և տգէտ եղբայրների—գիւղացւոց բարեկրթութեան վրայ։ Այս մասին որքան ստուգեցի, Տփխիսի մեծամեծք յառաջադէմ և պարտաճանաչ են, և աւելի մօտ են գիւղացւոց, և Ներսէս Ընորհալւոյ ասածին նման իրրեւ գիւղացւոց մեծ եղբայրներ են ամեն բանի համար օգնում են բանիւ, խորհրդով և գործով, և այդպէս իսկ վայել է ազնիւ քաղաքացւոց։ Ստուած տայ, որ քրիստոնէական եղբայրութիւնը անկեղծութեամբ տարածուի ամեն մի հայի սրտի մէջ։

ԽԱՉ-ՄԱՍ ԳԻՒՂ

Երկրորդ թաթախօս գիւղն է Խաչմաս՝ 30 տուն հայ գերդասանով. գիւղը շինուած է Ղուբայից դնացած գետի աջ կողմին, իսկ ձախ կողմին թուրքերի թաղն է, որք միացած են գետի բարձրակամար կամուրջովն։ Կամրջի աջ ափին բարձրադիր տեղում շինուած են կալուածատիրոջ փառաւոր ընակարաններն, որոց արեւելեան կողմի պատշգամբից (բալկոնից) նստողը նայում է մօտիկանց գետի դնացքին, կամրջին և